Արձանագրություն N 2

«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Ս.Մուրադյանի անվան ՄՄԿ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 22 ապրիլ 2024թ.

ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Ծաղկաձոր համայնքի «ԱՐԾԱՓ» ՀՈԱԿ տնօրեն Գագիկ Բաբաջանյան /ԳՊ ԳԱՊ/, իսկ անդամներ՝

Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ Իշխան Եղիազարյան /բացող անդամ/,

«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Ս.Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գոգոլյան /գնահատող անդամ/,

համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձանակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպիչ/ Սամվել Ալոյան /բացող անդամ/,

համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության,գյուղատնտեսության,բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Բաբայան/գնահատող անդամ/:

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից,իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. Տեղեկություն «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի գնման գնի մասին

2024թ. ապրիլի 17-ին կայացած նիստում, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	*Աշխատանքի անվանումը*	*Չափաբաժնի ընդհանուր գնման գինը*
1	**«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Ս.Մուրադյանի անվան ՄՄԿ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»**	**3 000 000**

«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը նախատեսված էր www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5,դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1.Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 5,դեմ՝ 0:

2. Տեղեկություններ հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել,պարզաբանումներ չեն ներկայացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

3.1 ***«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6»*** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը	Գործունեության հասցեն,ՀՎՀՀ-ն և էլ.փոստի հասցեն
1.	«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ	Ք.Երևան,Պ.Սևակի 1, 01816381, hazarashen@mail.ru

4.Տեղեկատվություն՝ *«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6»* ծածկագրով ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

ՀՀ դրամ

Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1. «Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Ս.Մուրադյանի անվան ՄՄԿ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ»	«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ	2200000 /երկու միլիոն երկու հարյուր հազար/	-	**2200000**/երկու միլիոն երկու հարյուր հազար/

Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշգրտությունը /տառերով,ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը/ համապատասխանում է (ճիշտ է):

5.Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ

5.1 2024թ. ապրիլի 18-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները: «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս արձանագրվել է, որ **«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ի** 74.37 % մասնակցությամբ **իրական շահառու հանդիսացող Գուրգեն Հակոբյանին փոխկապակցված անձը՝ Տաթևիկ Գուրգենի Հակոբյանը հանդիսանում է «ՄԱՌՔ» ՍՊԸ-ի իրական շահառու,իսկ տվյալ կազմակերպությունը** 10.01.2023թ.- 10.01.2025թ. **ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:**

5.2 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 67-րդ կետը, **2024թ. ապրիլի 18-ին հարցում է ներկայացրել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, 2024թ. ապրիլի 22-ին գործակակության կողմից տրամադրվել են «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ի և «ՄԱՌՔ» ՍՊԸ-ի վերաբերյալ** պետական միասնական գրանցամատյանից քաղվածքներ,որոնց համաձայն հաստատվել են 5.1 կետում նշված հիմնավորումները:

5.3 «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**...»:

5.4 Ընդ որում՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

5.5 Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել**: Մասնակցի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

5.6 Կարգի 58-րդ կետի համաձայն՝ **Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:**

Կողմ՝ 5,դեմ՝ 0:

6. ***«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6»*** **ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ ***«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/6»*** ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է չկայացած /պայմանագիր չի կնքվում/:

Կողմ՝ 5,դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Գագիկ Բաբաջանյան	
Անդամներ՝ Գոհար Գոգոյան	
Իշխան Եղիազարյան	
Հայկ Բաբայան	
Սամվել Ալոյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	